

Գր. Սլավթեցու մի այլ չափաբերական գրուածքի առթիւ, որի մասին լոկ ենթադրութիւն էինք արել հարեանցի մեր ծանօթութիւններէց մէկում («Արարատ», 1897, ապրիլ, էջ 174): Ազգագրական նիւթերի անխոնջ հաւաքող պ. Ն. Լալայեան՝ նկարագրելով Զաւախք զաւառում զանաւած հայ զրշագրերը, յիշում է ի միջի այլոց և Դեկիսայ զիւղի ԺԴ. դարու մի Աւետարան, որի վերջում ընդօրինակողի կողմից գրուած է ընդարձակ Յիշատակարան և մի ոտանաւոր «Ողբ ի ԴԵժողէս րան» (Ազգ. Հ. էջ 281—284): Թէ՛ յիշատակարանը և թէ՛ ողբը գրուած են Հայոց ՊՊՍԲ—1393 թուականին ձեռամբ «յոբնամեղ, պիտակ անուն վարդապետ» Գրիգորի, որ մեր կարծիքով Գր. Սլավթեցին պէտք է լինի:—Ինչպէս երևում է յիշատակարանից, Աւետարանի ընդօրինակութիւնը սկսուած է Բաջրերունեաց Արժէշ քաղաքի մօտերը զանաւած Սուխարայ վանքում Արժէշ քաղաքի մերձակայ Յիսկայ անապատում՝ այսինքն այն վանքերում, ուր արդարեւ գեղերած է Գր. Սլավթեցին իւր վանահայրութիւնից առաջ՝ յատկապէս 1385—1400 թուերին: (Տես մեր Նախարանը՝ «Արարատ», Անդ. էջ 174.)—Բուն Ողբը կամ Տաղը — «Նկայք ողբասցուք, եղբարք, զարութիւն ազգին Նետողաց ...» բաղկացած է 58 տողից և նուիրուած է Աթթամարի Զաքարիա կաթողիկոսի եղբրերգականնահատակութեան «պիղծ ամիրայի» ձեռքից, որ միւս անգամ նկարագրել է նոյն Սլավթեցին արձակ ոճով իւր Յայտաբանութեան մէջ (26 ին յունիսի):—Ողբի տողերի սկզբնատառերը կազմում են «Երգս այս Գրիգորի է վասն Զաքարիա Կաթողիկոսին Աթթամարայ:—Նկատելու է նոյնպէս, որ Աւետարանի յիշատակարանի սկզբումն էլ գնում է Սլավթեցին իւր պատմական վիպասանութեան վերջում յիշուած նման մի փոխարկութիւն՝ հիմնուած սյրուրենի վերայ, որի իմաստը հաւասարապէս մտնի է մեզ համար:—

«Ինքն զիտէ Տէրն կայուն

«Որ ի յայրէն մինչև ի նուն

«Ոչ է կարած գրիչս ի բուն»:

Գր. ԽԱՆՈՒԹԵԱՆ.

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ

ԲԻԻԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՈՐՆԵՐԻ

ՊԱՏԱՌԹԵԱՆ.

ԱԹԵՆՏՈՒԹԻՒՆ Հ. ԳԵԼՏԵՐԻ.

(Շարունակութիւն) *

527 թ. օգոստոսի 1-ն մեռաւ Յուստինը և Յուստինիանը (527—565) բապէս միապետ դարձաւ: Յուստինիանի կառավարութիւնը բիւզանդական պատմութեան մէջ կազմում է կարեւոր յեղաշրջան. Արեւելահռոմի պետը նորից փորձում է զրաւել արեւմտեան տէրութիւնը, որ խել էին Գերմանացիները, և վերականգնել նախկին տիեզերական միապետութիւնը: Աննկուն հեռեւորութիւնը, որով նա իւր կառավարութեան ամբողջ ժամանակամիջոցում առաջ տարաւ իւր աշխարհակալական ճրագիրը, վերջ ի վերջոյ յաջողութեամբ պատկուեց և նրա անունը մեծացրեց յետագայ սերունդների առաջ: Սակայն տիրապետութեան այդ յանդուգն քաղաքականութիւնը վեր էր տէրութեան զինուորական և արնտեսական ոյժերից և զա էր իսկապէս հիմքը՝ որ յետագայ դարերում քայքայուած անխուսափելի դարձաւ: Արեւելահռոմի այս ասնուած կայսեր թէ արտաքին և թէ նկեղեցական քաղաքականութիւնը հաւասարապէս փնասակար էր և կործանիչ տէրութեան համար:

Պատերազմները, որ մղում էին զլիսաուրապէս օտար երկրներից վարձուած զինուորներիով, կայսրից սրահանջում էին ահագին միջոցներ: Անաստասի հարուստ զանձարանը դատարկուել էր մասամբ Յուստինի ժամանակի որ ոչ մի կերպ անտեսաբար չէր կառավարում և մանաւանդ նրա եղբորորդու շապլելովը, որ ուզում էր ժողովրդեան համակրանքն իրան գրաւած ունենալ: Մեծածախս կառավարութեան միշտ աճող կարիքներին ստիպուած էր բաւարարութիւն տալ իշխմանից ղեկավար՝

1 Սեպ. 1897 թ.

Մոսկուա.

* Տես Արարատ 1897 թ. եր. 351.

Թիֆլիսի պրաֆեկտուր (praefectus praetorio) Յովհաննէս Կապույտովկացին որ կոպիտ և բռնակալ մի անձն էր իւր միջոցների մէջ ընտրութիւն չէր անում բայց իւր անընկճելի եռանդով՝ անտեսական զործերում մի արտակարգ հանձար էր Այն մեծ զատկերը որով ժամանակագիրները ներկայացնում են նրա ազատութիւնն ու կաշառակերութիւնը ապահովուէս մեծաւ մասամբ հաստատ է. բայց չպէտք է մոռանալ որ արեւելքին սովոր է կառավարութեան վերայ նայել իբրև իւր երգուեստ թշնամու վերայ որը ծծում է իւր հպատակների անտեսական միջոցները իսկ նրա ելեմտից մինիստրին համարում է ամենազղուելի զործիք այն իշխանութեան որը կողոպտում է մասնաւոր մարդկանց փողի քսակները: Յուստինիանը լաւ հասկացաւ իւր մինիստրի կարեւորութիւնը և նրան պաշտօնի մէջ պահեց իւր կառավարութեան ամբողջ առաջին կիսում:

Ներքուստ կառավարութիւնը մեծ եռանդով զործեց ամենից առաջ ձիարշառի խմբակցութիւնների գէմ որոնք չափազանց ուժեղացել էին: Անարդար կրկնէր եթէ կրկեսի կուսակցութիւնները համարէինք լոկ սուլթանական քմահաճոյքով կառավարուած մայրաքաղաքի անզուսպ ամբոխի խմբակցութիւններ կամ նէսպոյիական խուժանի (Mafia) նման ազատ որմնադիրների ամբոխում: Խմբերը կոչուում էին «գեմայի» — «ժողովրդականք» և ունէին իրենց կանոնաւոր ընտրած առաջնորդներին: Նախահեղինական քաղաքացիութեան գիտակցութիւնը նրա մէջ իւր վերջին ապաստարանը իւր մարմնացումն էր գտել: Ամենից շատ կարելի է նոցա համեմատել նախին Պաղոմէանների ժամանակ մակեդոնական «ekklesia Alexandrias» Աղէքսանդրիայի ժողովներին: Կրկէսի այդ խմբերը շնորհիւ մայրաքաղաքի արտակարգ նշանակութեանը այնպիսի ազդեցութիւն էին ձեռք ձգել որ կառավարութիւնը ստիպուած էր նոցա հետ հաշուի մտել. արքունիքը և պաշտօնեաները պարտաւոր էին որոշ գոյնի պատկանել: Մինչդեռ Անաստասի ժամանակ իշխել էին կանաչները: Յուստինիանի ժամանակ գէկն անցաւ կապույտների ձեռքը: Կառավարութիւ-

նը 532 թ. սկզբում փորձեց անկողմնակալ կերպով խառնուել նոցա զործերին պատմելով երկու խմբերից չարագործներին որպէս յղարկում կարողանայ վերջապէս ազատուել կուսակցութիւնների խնամախալութիւնից: Սակայն դրա պատճառաւ ծագեց Նիկիայի կոչուած ապստամբութիւնը: Քաղաքում սոսկալի հրդեհ պատահեց և աւելի մեծացրեց յեղափոխականների կատաղութիւնը: Ի զուր անցան կայսեր զիջողութիւնները՝ պաշտօնից հեռացնել ամենաաւելի պաշտօնեաներին թէև ինքըն էլ անձամբ ինչպէս երբեմն Անաստասը կրկեսի մէջ խնարհութիւն ցոյց տուեց: Երևան եկան զկապարների նպատակները. յուլիոսի 19-ին Հիւպոտիոսը՝ Անաստասի եղբորորդին հակաթոռ կայսր հրատարակուեց: Դրութիւնը չափազանց վտանգաւոր էր: Կայսրը և նրա զիւանդնայն իսկ Բելիզար հռչակաւոր զօրապետը որոշել էին փախչել: Այդ բոլորում թէնդորան իւր վճռողականութեամբ ազատեց թագաւորութիւնը Նորընտիր կայսրը վճռողական բոլորում չունեցաւ անհրաժեշտ եռանդը: Կապույտներին դրամի միջոցաւ և խստութեամբով նորից դրաւեցին մինչդեռ Բելիզարն և Մուսիկոսը ապստամբութիւնը խզողիցին արեան մէջ: Պաշտօնաթոռ ծառայողները նորից բռնեցին իրենց տեղերը Նիկայի ապստամբութեան յաղթական ճնշումը մի տեսակ սահմանաքար է կազմում արեւելահռոմէական զարգացման համար: Ժողովուրդը և սենատը զաղարում են դերակատար լինելուց քաղաքականութեան մէջ: Բացարձակ միապետութիւնն առանց սահմանափակման իշխող է դառնում:

Այժմ վերջապէս կարող էր Յուստինիանը հետամուտ լինել իւր վաղուց փայփայած աշխարհակալական ծրագրերին: Բնորոշ է որ արդէն հեռեկալ տարին Վանդալների տէրութեան հետ հաշիւները վերջացրին: 532 թ. սեպտեմբերին Պարսիկների հետ յախտեանական խաղաղութեան դաշն կապուեց, որով կարելի եղաւ արեւմտքի գէմ յարձակողական պատերազմ սկսել: Գերմանական ծովահէնների աֆրիկեան տէրութիւնը վաղուց ընկել էր իւր բարձրութիւնից: Տիրապետող սակաւութիւն Վանդալները կասկածանքով էին

նայում իրենց հպատակների բազմութեան վերայ, որ թէ ծագումով և թէ կրօնով իրենցից տարբերուում էին Ազատասէր Մաւրիտանցիների դէմ պատերազմը անյաջող էր: Հիլլիրիքսը (523—530) այն կարծիքն էր ունեցել թէ տէրութիւնը կարելի է փրկել միայնով Բիւզանդիոնի հետ և ոյժ ապով կաթողիկ հպատակներին: Գեյլամիրը (530—533) ընդհակառակը դերադասեց «ազգային» քաղաքականութիւնը: Յուսարիսիանի քաղաքական միջամտութիւնը յօրուա դահադուրի թագաւորին, մնաց առանց հետեանքի ինչպէս որ յուսացել էր արեւելահռոմէական զիւանդ: Սակայն կայսերական խորհրդատուները արդարացի կերպով զինուորական և տրնտեսական պատճառներով ամենաճանր կասկածներ էին յայտնում: Կայսրը սկսել էր տատանուել, մանաւանդ երբ լսեց ելեւմտից մինիսար Յովհաննէսի ծանրակշիռ կարծիքը: Բայց արեւելցի մի եպիսկոպոսի «աստուածառաք» կրպղը նրան թեւադրում է հաստատուն մնալ իւր սկրնական որոշման մէջ: Անկաւած որոշման օգնել են Տրիպոլի և Սարդինիայի ապստամբութիւնները, որոնք բարեկամաբար յաղուած էին դէպի Հռովմայեցիները: 533 թ. Կոստանդնուպոլսի նաւահանգրտից արշաւեց նաւատորմիդը, որ ուներ 10,000 հետեակ և 5000 ձիաւոր զինուորիներ: Բելիզարի անասաման հրամանատարութեան տակ: Աֆրիկա անցնել շատ դիւրացրեց Օստգոթներին կառավարութիւնը, որը անհեռատեսութեամբ օգնեց նոցա: Սիկիլիայի պաշտօնականները պառուէր էին ստացել Հռովմէական նաւատորմիկին ամեն տեսակ նպաստ հասցնել: Բախտը նպաստեց Բելիզարին սպասածից աւելի: 533 թ. սեպտեմբերին նա իջաւ Աֆրիկա և գրաւեց բնիկների յամակրանքը: մինչդեռ վանդալները անապատելի կերպով յարձակման էին ենթարկուած, միայն այն ժամանակ մտածեցին պաշտպանուելու, երբ թշնամին իրենց հողի վրայ էր: Տաներորդ մղոնաչափի մօտ Գեյլամիրը անհամեմատ մեծ զօրքով յարձակուեց թշնամու վերայ: Բելիզարի յաղթութիւնը որոշեց նաեւ մայրաքաղաքի վիճակը, որը ողջունեց յաղթողին ուրախ ազադակներով: Յաղթուած թագաւորը փախաւ Բուլլա

Ռեզիա: Նա իւր եղբոր՝ Յագոնի զօրքով ուժեղացած, որը նորից ընկճել էր ապստամբ Սարդինիան, նորից դուրս եկաւ Բելիզարի դէմ: 533 թ. գեկտեմբերին Տրիկամարոնի մօտ վանդալները յաղթուեցին երկրորդ անգամ: Թագաւորը փախաւ Նումիդիան լեռները: Նա շուտով անձնատուր եղաւ և զարգարեց յաղթողի իրաւացի արժանացած յաղթական գնացքը մայրաքաղաքում: վանդալների թագաւորութեան մաւրիտանական և կղզիների տիրապետութիւնները անձնատուր եղան առանց ընդդիմութեան: Զորսամանայ արշաւանքով Հռովմայեցիները նորից ձեռք էին բերել Աֆրիկան: Բելիզարը զխաւոր հրամանատարութիւնը յանձնել էր Դոմեստիկոս Սոլոմոն քաջ զօրապետին, սա արշաւեց աւրասեան լեռնային երկրի խորքերը, որ բաժանուել էր վանդալների անկանոն իշխանութեան ժամանակ: Ամրոցներով ապահովացրին Հռովմայեցիների նոր դրաւած երկիրները: Թէև հետեւել տարիներում Հռովմայեցիները բաւական յաճախ անգամ ստիպուած էին կրօնիւններ մղել թէ Մաւրերի և թէ նոյն իսկ իրենց ապստամբ զօրադնտերի փառասէր առաջնարդների դէմ: ընդհանրապէս Հռովմէական իշխանութիւնը հաստատուեց Աֆրիկայում: Կարթագէն այն թեմի զխաւոր քաղաքը դարձաւ, որը համարեա դարուկէս ենթակայ էր արեւելեան տէրութեանը:

Համարեա վանդալների տէրութեան կործանումից անմիջապէս յետոյ, սկսուում է Իտալիայի Օստգոթների դէմ պատերազմը: Նա տեւեց մօտ 20 տարի և դրա պատճառը Յուստինեանի կառավարութեան եղանակի մէջ պիտի որոնել: Պատերազմը սկսուեց շատ թերի միջոցներով և մեծաւ մասամբ այդպէս էլ շարունակուեց: Ինչքան զրաւիչ և յանդուգն էր աշխարհակալական քաղաքականութիւնը, այնքան ոգորմելի և խեղճ էր զինուորական ոյժը: Թէև իրաւ է այդ զգացումը աւելի ոյժ ստացաւ վերջին Ամալների միանգամայն անմիտ քաղաքականութեամբ, որով նոքա ժողովրդի մէջ ծագեցրել էին չափազանց հակառակութիւն և տէրութիւնն էլ թուլացրել: Ամալապիտան Թէոդորիկ Մեծի աղջիկը, և նմանապէս Թէոդահատը, որ յետոյ առաջնի

կառավարչակից և սպանողը դարձաւ, երկուսն էլ իրենց հռովմէական կրթութեամբ և ուսումնականութեամբ օտարացել էին իրենց ցեղից: Ամալասովտան հռովմայեցիներին նըպաստում էր և պաշտպանում: Երբեք չէր կառավարութեան ղեկը յանձնուած էր հռովմայեցի մարդկանց: Երբեք կառավարիչներն էլ ինքնակործան դաւաճան յարաբերութեան մէջ էին մտել Արեւելահռովմի հետ: Բայց երբ սպանեցին թագուհուն, որ զաշն էր կապել Յուստինիանի հետ, կայսրը ցանկալի պատճառ ունեցաւ պատերազմ յայտարարելու: Բելիզարը 535 թ. Սիկիլիայում ամիսը 7500 մարդկանցով համարեա ամբողջ կղզին ընկաւ նրա ձեռքը: մինչդեռ Մուսղոսը յարձակուեց Դաղմատիայի վերայ: Ողորմելի Ամալը (Թէոդահատը) արդէն որոշել էր իւր գահը Յուստինիանին տալու, երբ Օստրոթմների ղեկքի յաղթութիւնը Դաղմատիայում փոխեց նրա մտադրութիւնը, և ազգային պատերազմասէր կուսակցութեան ձեռքը ձգեց կառավարութիւնը: Բելիզարը անյապաղ մտաւ Ստորին իտալիայ, որի բնակիչները բացառապէս հռովմայեցիներ էին: Միայն Նէապոլը կարճ ժամանակով ընդգրկուեցաւ: Մինչ այդ թագաւորը անդործ սպասում էր մայրաքաղաքում: Այդ ժամանակ ժողովրդի կատաղութիւնը փոխուեց բացարձակ ապստամբութեան: Ամալներին հրատարակեցին գահազուրկ: Թէոդահատը փախչելիս սպանուեց, և Վիտիգէսին, որ թագաւորական ծագումից չէր, վահանների վերայ բարձրացրին (թագաւոր կարգեցին): Սակայն գործը հսկայական էր, ազատել հիմքից խախտուած տէրութիւնը, այդ թէև քաջ, բայց սահմանափակ և ընդհանուր կացութիւնը ըմբռնելու անկարող մարդու ոյժերից միանգամայն վեր էր: Փոխանակ հռովմը պահպանելու, նա շտապեց Ռաֆիննայ այնտեղ պսակուեց Ամալասովնտայի դուստր՝ Մատասովնտայի հետ, որպէսզի օրինական դարձնէ իւր թագաւորութիւնը: Միևնոյն ժամանակ կարծում էր, որ հիւսիսում հեշտ կլինի հետեւել Փրանկների ընթացքին, որոնց երկու կողմն էլ աշխատում էին զրաւել: Այն ժամանակ Բելիզարը 636 թ. Դեկտեմբերի 9-ին հոգեւորականութեան, սենատի և ժողովրդի

հրաւիրելով զրաւեց հռովմը, որ շատ թոյլ էր պաշտպանուած: Ռոմանական բնակիչների համակրանքը նրան զիւրութիւն տուաւ հեշտութեամբ վերցնել Միջին—Իտալիայի կարեւոր կէտերը: Վիտիգէսը ամենայն ոյժով աշխատեց ուղղել իւր սխալը: Նա գոթական բոլոր զօրութիւնով արշաւեց հռովմի վերայ, և սկսեց այն հռչակաւոր պաշարումը, որ տեւեց մի ամբողջ տարի, և չնայած որ կայսերական կառավարութիւնը կարողանում էր շատ քիչ օգնութիւն հասցնել, բայց Բելիզարի հանձարեղ ղեկավարութեամբ առաջնորդուած, պաշտպանութիւնը վերջացաւ Դոթերի կատարեալ անյաշողութիւնով: Երբ Բելիզարին ստորազրեալ Յովհաննէս զօրապետը զրաւեց Արիմինում կարեւոր քաղաքը, միւս կողմից էլ նրա իսաւրացիները ստիպեցին Վիտիգէսին 538 թ. մարտին յետ նահանջել: Միաժամանակ Բիւզանդիոնից նոր օգնութիւն հասաւ: Նարսէս ներքինին երեւց Պիցենումում 7000 ընտրեալ զօրքով: Սակայն նրա ունեցած հրահանգութիւնը, որ կայսերական զիւանից զիտամբ անորոշ էր խմբադրուած, նրան տալիս էր համարեա թէ Բելիզարից անկախ զիրք: Թէ ինչքան էր ընկել Դոթերի վարկը, այդ երեւում է նրանից, որ Մայլանդն էլ է փորձում Բելիզարի կողմն անցնել: Մուսղիլասը Լիգուրիայից այնտեղ անցաւ և զրաւեց այդ նշաւաւոր քաղաքը և հարեան տեղերը: Բայց այդ ժամանակ վերջապէս Դոթերի թագաւորը Փրանկների թագաւորի հետ զաշն կապեց, նոցա տալով Պրովանսը: Դոթերը և Թէոդիբերդից ուղարկուած Բուրգոնդիոնները արեցին Մայլանդին: Շատ չանցած Աւստրազեան թագաւորը ինքը երեւց Վերին իտալիայում սարսափի մէջ ձգելով ոչ պակաս Դոթերին քան Յոյներին: Երբ Փրանկները յետ քաշուեցին, Բելիզարը արեց Փեղուէ և Ա. քսիմում և 539 թ. պաշարեց Դոթերի Ռաֆիննա մայրաքաղաքը: Նա ինչքան քաջ զօրավար էր, նոյնքան էլ հմուտ քաղաքազէտ էր, և հասկացաւ ի դերեւ հանել իտալիայի բաժանման ճրագիրը, որ առաջարկել էին Փրանկները Դոթերին: Այդ ժամանակ էր, որ կայսերական զիւանի միջամտութեամբ կարծես թէ առանց հետեւանքի էին մնալու նրա ձեռք բերած յա-

Նորութիւնները: Սոսորովը, որին անհանգիստ էին անում Հռովմի յաղթութիւնները, պատարաստուել էր յարձակուելու Ասորիքի վրայ: Ուստի Յուստինիանի օգուտն էր ինչպէս էլ լինի վերջացնել արեւմուտքի պատերազմը: Սա Գոթերի թագաւորին առաջարկեց Պօղոսի միւս ավի երկիրները մինչդեռ մնացած թերակղզին մնալու էր Հռովմայեցւոց ձեռքին: Բելիզարի ըմբոստ փառասիրութիւնը ի վնաս տէրութեան՝ ոչնչացրեց այդ շատ խելացի ծրագրի իրադրութիւնը: Սա ձեռի համար ընդունեց Գոթերի թագաւորի առաջարկութիւնը, որի համաձայն ինքն էր ընդունելու իտալիայի թագաւորի աստիճանը: Ռաֆեննան անձնատուր եղաւ, և թագաւորը գերի ընկաւ: Վերին իտալիայի գոթական հրամանատարները, համարեա առանց բացառութեան, յայտնեցին իրենց հնազանդութիւնը և հպատակութիւնը: Թրուում էր որ ամբողջ իտալիան նորից վաստակուած էր Հռովմայեցւոց պետութեան համար: Այն ժամանակ Բելիզարին կանչեցին որ ստանձնի Պարսից դէմ պատերազմի հրամանատարութիւնը: Սա առանց վարանելու կատարեց այդ հրամանը, և Կոստանդնուպոլիս տարաւ Գոթերի թագաւորին ու թագաւորական պալատի գանձերը:

Հռովմի յաղթանակը վաղաժամ էր: Անհեռատեսութեամբ՝ հրամանատարութեան զանազան զօրապետների մէջ բաժանելը և նոր կառավարութեան տնտեսական ձնշումը այնպիսի սխալներ էին, որոնցից օգտուեց ազգասէրների կուսակցութիւնը: Սքա ազատամբեցին: Երկու կարճ միջանկեալ կառավարութիւններից յետոյ, Բազիլիլային կամ Տոտիլային 541 բարձրացրին թագաւորական վահանի վրայ: Մի տարուայ մէջ տեղի ունեցաւ կատարեալ փոփոխութիւն: Հռովմայեցիները մի քանի պատերազմներում յաղթուեցին: Առանց ժամանակ կորցնելու ղլխաւոր տեղերի պաշարմամբ, Գոթերի թագաւորը յաղթական ընթացքով անցաւ Միջին—իտալիա 542 թ. հարաւն էլ էր նրան հպատակում: 543 թ. ընկաւ Նէպոլը: Ոչուր Բելիզարին նորից իտալիա հրաւիրեցին: Սա պաշտօնով ուրիշից կախուած, շատ քիչ զօրքով և առանց փողի, չկարողացաւ արգելք լինել, որ Տոտի-

լան 546 թ. Հռովմին էլ չտիրէր: Քաղաքը զրկուեց իւր բնակիչներից, հրդեհի մասնուեց, պարիսպների մի մասը կործանեցին, և միայն Բելիզարի միջամտութիւնը քաղաքագիտական եղանակաւ՝ արգելք եղաւ նրա վերջնական աւերման: Բայց երբ թագաւորը գէպի Լուկանիա քաշուեց, Բելիզարը մտաւ Հռովմ, բնակիչները նորից վերադարձան և արագութեամբ պարիսպները նորոգեցին: Տոտիլայի փորձը՝ յետ գրաւել քաղաքը, անյաջող անցաւ: Սակայն այդպէս էլ Բելիզարի կացութիւնը շատ դժուար էր: Կայսերական զիւանդ նրան օգնութիւն չէր հասցնում: Կարիք էլ չկայ կարծելու՝ թէ Յուստինիանը այդպէս վարուում էր չար դիտաւորութեամբ: Հիւսիսային ժողովուրդների յարձակումը Բալկան-թերակղզու վրայ և տէրութեան դանձարանի կատարեալ դատարկութիւնը, բաւականաչափ պարզում են կառավարութեան այդ վարմունքը: Բելիզարը վերադարձաւ Կոստանդնուպոլիս: Հռովմը նորից ընկաւ Գոթերի ձեռքը: Տոտիլան համարեա բացարձակ տէր էր իտալիայի: Սրա նաւատորմիղը տիրեց և աւարի առաւ Սիկիլիան, յարձակման էր ենթարկում Սարդինիան և Էպիրոտեան ավերը:

550 թուականը նշանաւոր է Յուստինիանի իտալական քաղաքականութեան յեղաշրջմամբ: Դերմանոսը՝ Կայսեր եղբորորդին, Օստ-Գոթերի Մատասվինտա իշխանուհու ամուսինը, իբրեւ ընդհանուր զօրապետ (generalissimus) պէտք է յանձն առնէր իտալիայի զօրաց հրամանատարութիւնը: Մտադրուած էր գերմանական և հռովմէական ազգակցական կապերով, հաշտեցնել գերմանական և հռովմէական ազգային տարրերի միմեանց հակասող շահերը: Սակայն Դերմանոսը անակնկալ մեռաւ Սերդիկայում՝ պատերազմի պատրաստութիւնների ժամանակ, որը ձգձրուել էր, որովհետեւ Սլաւոնները և Հոները հեղեղել էին Ուլլուրիկումը:

Վերջապէս Յուստինիանը արտայայտեց իւր եռանդը պատերազմական գործում:

Սարսէսի անձի մէջ գտաւ իւր ցանկացած առաջնորդին, որի ղինուորական բարձր հանձարի առաջ բողբը խոնարհուում էին կամովին, սա իւր ձեռին ունենալով հարուստ

գրամական միջոցներ, կարողացաւ հէնց առաջին անգամ հանդէս գալուց տպաւորութիւն թողնել իւր զօրքովը, որի մեծագոյն մասը բարբարոսներէից տուած օժանդակ զնգերն էին: Երանց մէջ առաջին տեղը բռնում էին Լանգորարդների թագաւորի վարձկանները, որ նա ուղարկել էր համաձայն իւր կռած դաշինքի: Զնայած որ Փրանկներն ու Գոթները փորձեցին Նարսէսի ծանապարհը կտրել, նա ցամաքով հասաւ Ռափիննա: Միջին Իտալիայի Ապենիններում՝ Տագինայի մօտ (552 թ. ամառուայ մէջ) տեղի ունեցաւ վճռողական ճակատը, որը կարելի է այդ ազնիւ ցեղի ազգային հարուածը համարել և որը իսկապէս վերջ տուաւ Գոթերի իշխանութեանը Իտալիայում: Եռսասհատական պատերազմը Տեյայի առաջնորդութեամբ 553 թ. վերջացաւ Կամպանիայի Սարնոսի մօտի պարտութիւնով: Աւելի վտանգաւոր դարձաւ Հռովմայեցիների համար Փրանկների արդէն շատ ուշացած միջամտութիւնը: Նոցա երկար չեզոքութիւնը փայլուն ապացոյց է, թէ Մերովինգեան հարստութիւնը քաղաքականապէս դեռ ինչքան տհաս էր: Այժմ էլ Փրանկները իրենց զորքը շատ վատ տարան: Ալեմաննա—Ֆրանկական ժողովրդական յարձակումը Լեւթարիս և Բուտիլինոս հերցոգների առաջնորդութեամբ, մասամբ ժանտախտի զոհ գնաց, մասամբ Նարսէսի թրին Կապուայի մօտ: Երբ, զխաւորապէս Գոթերի մնացորդների օգնութեամբ, ոչընչացրին նաեւ այդ ստոր խառնիճաղանջ ամբոխին, ամբողջ Իտալիան վերջնականապէս վերստին ընկաւ Հռովմայեցւոց իշխանութեան տակ և տէրութեան հետ նոր միացած թերակղզին կարգաւորելու կարեւոր պաշտօնը յանձնուեց Նարսէս պատրիկիոսին:

Ժամանակով՝ Օստգոթների իշխանութեան կործանելուց յետոյ, անմիջապէս հետեւում է Պիրինեան թերակղզու զործերի մէջ միջամտութիւնը: Որպէս զի Ազիլա գահաժառանգին Վեստգոթների Աթանազիլդ թագաւորի դէմ պաշտպանած լինեն, 554 թ. Սպանիա ուղարկեցին Լիբերիոս պատրիկիոսին: Կորդուբան ընտրեցին յունական սպանիական նահանգի միջնափայր, բայց նոցա անհաստատ տիրապետութեան էական մասերը կազմում

էին, թէև Դանը և ուրիշ պատմագիրներ աւելի մեծ են ընդունում, մի քանի կարեւոր ծովային ամրոցներ, ինչպիսիք են Կարթագո Սպարտարիա, Մալակա և Ասիդոնիա: Այդ յարձակողական պատերազմները, որ միանգամայն բարձր էին Արեւելահռոմի ոյժերից, արդէնք դարձան պաշտպանելու պետութեան հիւսիսային սահմանները, որ անհամեմատ կարեւոր էր: Մենք լսում ենք, որ Հոները, Սլաւոնները և Անտերը անդադար յարձակում էին Դանուբի հարաւային նահանգների վրայ: Իլլիրիկումը և Թրակիան նոցա աւերումների մշտական տեղերն էին: Աւելի սարսափելի էր 540 թ. արշաւանքը, որը տարածուեց մինչև Եռնաստան և ընդգրկում էր գտաւ միայն Իսթմոսի ամրութիւնների առաջ: 559 թ. Հոները (Բուլգարները) և Սլաւոնները սպառնում էին նոյն իսկ մայրաքաղաքին, զառամեալ Բելլիզարը նրանց յետ մղեց: Կառավարութեան ամրութիւնները՝ պաշտպանուած չլինելով բաւականաչափ զօրքերով, մնացին միանգամայն անօգուտ, դրամ վճարելը և ընծաները՝ փոխանակ յետ կանգնեցնելու անյադ բարբարոսներին, շարունակ զոգոռում էին նոցա անցնել Դանուբը:

Արեւմտեան պատերազմների պատճառաւ տրամադրելի զօրքերի պակասութիւնը զգալի եղաւ նաեւ դէպի Պարսկաստանը ունեցած թոյլ քաղաքականութեան մէջ: Եռստինի մահուանից անմիջապէս առաջ, ծեր Կաւատը պատերազմ էր սկսել չնչին պատճառներով, որի ժամանակ Բելլիզարը առաջին անգամ իբրեւ զօրավար դեր կատարեց: Դրա մէջ ուշադրութեան արժանի է Արաբների կարեւոր դիրքը և հանդէս գալը, որոնք մինչև այդ կառավարւում էին երկու մեծ տէրութիւնների սահմաններում իբրեւ փոքրիկ աւատական իշխանութիւններ և այն չափով ու այնքան ժամանակ էին հնազանդւում, ինչ չափով իրանց էր հաճելի: Մուսուլման լիբիայի աւատական իշխանը, կռւում էր Պարսից բանակում: Եռստինիանը 531ին Սարակինոսների բոլոր զաւառակները, որ հպատակւում էին Հռովմին, ստորագրեց Խարիթին, Գաբալայի որդուն, և նրան թագաւորական տիտղոս

տուաւ: Նրա պարտքն էր ամենից առաջ դէմ դնել Պարսից մասի իւր հայրենակիցներին: Նոյն տարին պատերազմի դաշտ դուրս եկաւ ինքը՝ Պարսից թագաւորը և Բելի-ղարին լաւ ջարդ տուաւ Կալինիկոսի մօտ, թէև յաղթութիւնը առանձին նշանակութիւն չունեցաւ: Թագաւորի մահից և Սոսրովի դահ բարձրանալուց յետոյ՝ 532 թ. հաստատուեց յաւիտենական խաղաղութիւնը՝ որի մէջ Հռովմը յանձն առաւ ստորացուցիչ պայմաններ. ամենից առաջ տարեկան տուրքեր պիտի վճարէր Կովկասեան ամրութիւնների պահպանութեան համար. Հռովմը ամեն կերպ կամենում է ազատ լինել արեւմուտքում գործելու: Արդէն ութ տարի յետոյ երկրորդ պատերազմը սկսուեց: Դրա համար այնքան էլ հարկաւոր չէին Վիտիգէս թագաւորի և հռովմէական Հայաստանի ճիշտած մեծամեծների գեսպանութիւնները: Սոսրովն ինքը կամենում էր պատերազմ, որովհետեւ իւր Հռովմէացի հակառակորդի աշխարհակալութիւնը և իշխանութեան ծաւալելը իրան երկիրը էր ազդում: Նա պատերազմը վարեց անսովոր եռանդով: Արդէն 540 թ. յարձակուեց Ասորիքի վրայ: Ամուր քաղաքները ստիպուած էին մեծ զուժար վճարել որպէս զի նա հեռանայ: Որոնք պաշտպանուում էին, ընկնում էին մէկը միւսի հետեւից, ամենից առաջ ընկաւ Անտիոք գլխաւոր քաղաքը: Նրա բնակիչներին արեւելիկների հին սովորութեամբ տեղափոխեց իւր մայրաքաղաքի մօտը, որտեղ նա հիմնեց մի նոր Սոսրով—Անտիոքիայ յունական-քրիստոնէական հաստատութիւններով: Հետեւալ տարիներում Միջագետքի կռուի դաշտում պատերազմը մղում էին փոփոխակի յաջողութեամբ: Ամենայայտնի դէպքը Նիսիսիայի անյաջող պաշարումն է Պարսիկների կողմից 544 թ.: Ասորական քրիստոնէականները ամուր կերպով հաւատում էին իրենց սուրբի՝ մեր Տիրոջ անձեռագործ դաստառակի հրաշագործ պաշտպանութեանը: 545 թ. տեղի ունեցաւ զինադադար: Սակայն Սարիթի և Մունդիթի մէջ կռիւը շարունակուում էր, ինչպէս նաեւ Լազիստանում: Այդ նահանգը, որ համապատասխան էր հին Կոլխիսին, կապուած էր Հռովմի հետ, որտեղից նշանակ-

ւում էին նրա թագաւորները՝ աւատական հպատակութեամբ: Նրբ հիմնարկեցին Պետրա նաւահանգիստը և հռովմէական պաշտօնեաները մենավաճառութեամբ կեղեքում էին Լազերին, ժողովրդի կատաղութիւնը շատ սաստկացաւ: Դուրադէս թագաւորը անցաւ Պարսից կողմը: Սոսրովը, որ Վրաստանի տէրն էր, անյաղութեամբ օգտուեց հանգամանքից, որպէս զի կարողանայ հաղորդութիւն հաստատել Սև ծովի հետ: Կարեւոր Պետրան ընկաւ Պարսից ձեռքը: Բայց երբ 549 թ. հռովմայեցիները նորից վերսկսեցին պատերազմը աւելի մեծ եռանդով, Լազերը կրկին անցան նոցա կողմը, ինչպէս որ սովոր են վարուել այդպիսի աւազակաբարոյ թագաւորութիւնները, բռնել ու ժեղի կողմը: 551 թ. հռովմայեցիք վերստին գրաւեցին Պետրան. և հետեւալ տարիների ճակատներում օրէցօր աւելի էին յաղթող հանդիսանում: Ուստի զինադադարը տարածուեց նաեւ Լազիստանի վրայ և վերջապէս 562 թ. հինգամեայ խաղաղութեան դաշն կապուեց: Դրանով Հռովմայեցիք պարտաւորւում էին տարեցտարի բաւական խոշոր զուժար վճարել. իսկ դրա փոխարէն Լազիստանը ընդմիշտ նոցա ենթակայ ճանաչուեց. և դա է միակ յաջողութիւնը, որ ձեռք բերին արեւելքում:

Ինչպէս որ Յուստինիանի կառավարութիւնը արտաքուստ յայտնի նշանաւոր սահմանաքար է ներկայացնում բիւզանդական պետութեան զարգացման մէջ, այնպէս էլ ներքին կառավարութեան մէջ բնորոշւում է մի շարք մեծագործ կարգադրութիւններով: Այդտեղ առաջին տեղը բռնում են շինութիւնները: Դուրեք բիւզանդական պետութեան ոչ մի շրջան չունի այնպիսի մեծ շինարարական գործունէութիւն, ինչպէս Յուստինիանի կառավարութիւնը: Նոր քաղաքներ հիմնեցին, հները զարդարեցին բաղանիքներով, ջրմուղներով և պալատներով, շինեցին կամուրջներ: Կանոնաւոր կերպով երկրի բոլոր սահմանները ամրացնում էին բերդերով, որոնք, իրաւ է, հիւսիսային սահմաններում, որ ամենից շատ էին վտանգի ենթակայ, չէին կատարում իրենց գերը. իսկ ամենից շատ զարմանալի է, համապատասխան դարու բնաւորու-

Թեան, կրօնական հիմնարկութիւնների շատութիւնը: Եռաստիւններ առանձին եռանդով աշխատում էր եկեղեցիների և վանքերի շինութեան համար: Էլ-Աքսան Երուսաղէմում և մանաւանդ Ս. Սոփիայի տաճարը կոստանդնուպօլսում, դեռ այսօր էլ վկայ են իշխանապետի բարձր զգացմունքներին: Մա իրաւունք ունէր հպարտանալու թէ Սողոմոնին էլ է գերեզանցել: Թէ ինչեր կարող էին անել, նաև հարուստ հպատակները, որոնք նոյնպիսի ըզգացմունքներ ունէին, դեռ այն ժամանակներում, ցոյց է տալիս բարեպաշտ Եռլիան սեղանաւորի գործը՝ Ռափէննայի Սան-Վիտալէի հրաշագեղ շինութիւնը, որը շինուել է մենակ այդ մասնաւոր մարդու միջոցներով, և զարգարուել հարուստ զոյնների մոզակներով:

Եռաստիւնի կառավարութիւնը իւր արտաքին բոլոր շքով չէ կարող երջանիկ համարուել. տեղի ունեցան բաւական արտասովոր դժբախտ պատահարներ: 542 թ. զարհուրելի ժանտախտը, որը չորս տարի շարունակ տեւեց, ժամանակակիցների համար համարուում էր աստուածային բարկութեան ապացոյց: Բազմաթիւ երկրաշարժներ աւերեցին ամենափառաւոր քաղաքներ: Ամենասարսափելի հարուածը դիպաւ Անտիոքին, որ Եռաստիւնի ժամանակ, 526 թ-ի զարհուրելի աւերումից երկու տարի յետոյ, նորից նոյնպիսի դժբախտութեան հանդիպեց: Վերաշինութեան ծախքերի համար կայսերական զանձարանը կանոնաւոր կերպով տալիս էր շատ մեծ նպաստ: Դժուար է հասկանալ թէ ինչպէս նա կարողանում էր թէկուզ փոքր ի շատէ, բաւարարութիւն տալ այդ չափազանց մեծ պահանջներին մեծածախս պատերազմների հետ միասին, հպատակները զանգատուում էին հարկերի ծանրութեան տակ. բայց իսկապէս մեծ գործեր էլ էին կատարուում:

Ամենից առաջ Եռաստիւնի անունը յետագայից համար միացած է հռովմէական օրէնքների հետ, որին նա ամբողջացրած ձև տուեց: Ամենապիտան էր մի գրքի մէջ միացնել արդարադատութեան բոլոր աղբիւրները՝ իրաւունքը և օրէնքները—*jus et leges*—դրանով հնացած իրաւունքները կրճատուում էին, գրականութեան միջից հակասութիւն-

ները վերանում. նոր կարգերի պիտի ենթարկէին բաւական թուով իրաւագիտական հաստատութիւններ: Այդ կարեւոր մեծ գործը յանձնուեց իրաւագէտների մի յանձնաժողովի Տրիբոնիանի ղեկավարութեամբ: 529 թ. դուքս եկաւ Եռաստիւնան ձեռագիրը—*codex Iustinianus*—, որ մի ժողովածու էր բոլոր այն սահմանումների (*Constitutio*) որ ընդհանուր ընդունելի էին: 533 թ. զուլա բերեցին աւելի դժուար գործը՝ իրաւաբանական գրութիւններից ստեղծել օրէնքների մի զիրք—*Digestae*: Միևնոյն ժամանակ հաստատութիւնների համար կաղմեցին իրաւագիտութիւն սովորելու մի դասագիրք, որը պիտի օրինական ոյժ ստանար և գործածութեան մէջ մտնէր ղիզեստների հետ միաժամանակ, 533 թ. Դեկտեմբերի 30-ին: Եանձնաժողովի վեցամեայ աշխատութիւնը երեւան էր հանել նրա առաջի հրատարակութեան՝ *կոդեքսի* զանազան թերութիւնները: Ուստի 534 թ. լոյս տեսաւ նախնական ընթերցումների կրկնում *կոդեքս—Codex repetitae praelectionis*: Եռաստիւնեանը հանդիսաւոր կերպով յայտարարեց թէ զրանով վերջապէս լրանում է օրինադրութիւնը: Ապագայ սահմանումների համար նախատեսուեց առանձին յաւելում՝ նոր սահմանումներ—*Novellae Constitutiones*: Երբ օրէնքի այս նոր զիրքը ոյժի մէջ մտաւ, դատաստանաւորում միայն այդ էին թոյլ տալիս, միայն դրա վրայ էին պարտաւոր ուսուցանելու պետութեան յայտնի դպրոցներում՝ կոստանդնուպօլիս, Հռովմ և Բեյրութ:

Վերջապէս պէտք է յիշել Եռաստիւնի գործունէութիւնը նաև եկեղեցական խնդիրների վերաբերեալ: Ոչ մի կայսր եկեղեցական գործերի վերահսկողութիւնը այնպիսի եռանդով չէ տարել, բայց ոչ մի կայսր էլ չէ տեսել որ իւր զերիշխանութիւնը այնպէս անսահման կերպով ընդունուէր եկեղեցուց, ինչպէս Եռաստիւնիանը: Մա իրապէս թագաւոր էր և քահանայ: «Հակառակ կայսեր կամքի և հրամանի առ հասարակ ոչինչ չպէտք է պատահի եկեղեցու մէջ», յայտարարում է 536 թ. ժողովը: Եւ իսկապէս Եռաստիւնեանը չափաւոր կերպով ազդել է կրօնի դաւանաբանական զարգացման վրայ՝ մեծածաւալ յօդուածներով, դրա

ապացոյցն է նրա նա աղը Մենասին Որի-
գինեան թիւը հաւատի մասին և 543 թ.
նրա հրովարտակը երեք գլխի մասին: Անու-
րանալի է, որ նա իւր եկեղեցական քաղա-
քականութեան մէջ ամեն կերպ ձգտում էր
519 թ. ծանր սխալը նորից ուղղել և մոնո-
փիլեզիտներին յետ դրաւել: Եզրպտոսում իշ-
խում էին «հետեալները». Ասորիքում և
Միջագետքում ժողովուրդը նոցա կողմն էր,
և այդ հանգամանքը պարտական էր իւրա-
քանչիւր կառավարութիւն ի նկատի առնել: Բա-
ցարձակ կերպով նոցա պաշտպանում էին թէ
Թէոդորոս կայսրուհին, որ այս խնդրում էլ ար-
տայայտեց իւր քաղաքագիտական սրատեսու-
թիւնը և թէ կայսերական տան և արքունիքի
բազմաթիւ անդամները: Դայթակղութեան
քարը մնում էր քաղկեդոնականութիւնը: Ի
զուր անցան Լեոնտիոսի և սկիւթեան վարդա-
պետների փորձերը՝ փոխել Լեոնի յօդուածները,
համաձայնեցնելով Կիւրիղի աստուածաբանու-
թեանը. այնպէս որ ի թէ Սեվերոսը՝ մոնո-
փիլեզիտների ամենայայտի ուսուցիչը, փոքր
ինչ բարի կամք ունենար, միութիւն ստեղ-
ծելու հնարաւորութիւն կար. ի զուր էր որ
կայսրը իւր հրամանների մէջ լռութեան էր
տալիս քաղկեդոնական յօդուածները: 533
թ. կրօնական զրոյցի ժամանակ արտայայտե-
ցին ամենամեծ զիջողութիւն, բայց այդ էլ մո-
նոփիլեզիտների վրայ ազդեցութիւն չարաւ: «Աս-
տուածապաշտ Աւգուստան» (կայսրուհին) ան-
դադար աշխատելով իւր բարեկամների հա-
մար, յոյս ունէր օրինական ճանապարհով ո-
չնչացնել քաղկեդոնականութիւնը: Մայրա-
քաղաքի գահի վրայ արդէն բարձրացել էր
նրան համակարծիք Անթիմոսը: Բայց Հռովմի
Ագապետ պապը, Եփրեմ Անտիոքացուց զգու-
շացրած, ճիշտ ժամանակին միջամտեց: Ա-
րեւմուտքը, որ քաղաքականապէս նորից զը-
րաւուել էր, չէր կարելի թոյլ տալ որ եկեղե-
ցական խնդիրներով նորից բաժանուի: 536
թ. ժողովը նգովեց Անթիմոսին և Սեվերո-

սին: Երբ 537 թ. Աղէքսանդրիայի Տիմոթէոս
արքեպիսկոպոսը մեռաւ և նրա յաջորդի
ընտրութեան մասին ժողովրդի ու ազնուա-
կանութեան մէջ անհամաձայնութիւն, ծագեց,
կայսերական կառավարութեան համար ցան-
կալի առիթ էր, անլուր բռնութիւններով մո-
նոփիլեզիտների այդ վերջին ապաստանարա-
նում ևս ընդունել տալ տէրութեան եկեղե-
ցին, թէև իրաւ է միայն արտաքին ձևով:
Կայսերական եկեղեցու կողմը միայն պահում
էին խեղճութեան մատնուած, երբեմն հա-
րուստ միջոցների տէր՝ մոնոփիլեզիտների ե-
կեղեցական կալուածներով զրաւուած արք-
եպիսկոպոսութիւնը, բարձր պաշտօնեաները
և քաղաքի Թունաց ազնուականների մի մա-
սը: Սակայն բոլոր այդ անյաջողութիւնները
չկարողացան նրան յետ պահել, որ մի կողմ
թողնէր իւր միարարական ծրագրերը և դա-
ւանաբանութեան մէջ աշխատելու ձգտումը,
որ հիւանդութեան էր հասցրած: Սակայն ե-
կեղեցական քաղաքագիտութեան տեսակէտից,
չափազանց նուրբ մտածուած մի կարգադրու-
թիւն էր երեք գլուխների դատապարտու-
թիւնը: Անտիոքեան դպրոցի մեծ ուսուցիչը՝
Թէոդորոս Մոփսուեստացին, որի մասին քաղ-
կեդոնականութիւնը լռութիւն էր պահա-
նել, Թէոդորիդ Կիւրոսացու և Իբաս Եղեսա-
ցու զանազան գրութիւնները, մարդիկ որոնց
ուղղահաւատութիւնը չորրորդ ժողովը յատ-
կապէս ճանաչել էր, այժմ — հարիւր տարի
անցնելուց յետոյ — նգովքի ենթարկուեցին:
Բայց դա ոչ միայն միանգամայն քաղկեդո-
նականութեան դէմ էր և լռելեայն դատա-
պարտութիւն Լեոն մեծի աստուածաբանու-
թեանը, այլ և իրապէս սրբազրում էին այն
ժողովը և գործնական կեանքից հանում:
Պարզ կերպով վերականգնեցին հին հենոթի-
կոնների ծրագիրը: Հռովմից դատապարտուած
Ակակիոսը և սուրբ Փլաբիանը դրանով փա-
ռաւոր կերպով արդարացան: Միութիւնը ս-
տեղծելու համար հաղիւ թէ կարելի լինէր
աւելի մեծ զիջումներ անել: Բայց այդ բո-
լորը շատ ուշ եղաւ: Թէև արեւելքի պատ-
րիարքները և եպիսկոպոսները, որ սովոր էին
հաւատալու ինչ որ կայսերական դիւանը նոցա
առաջարկում էր, ծանր սրտով բայց ընդու-

1. Յուսիսն Բ-ը և Սոփիան միեկու գահ բարձրա-
նալը մոնոփիլեզիտների կողմն էին պահում: Ժողովրդի հաս-
կացողութեան մէջ «հետեալները» համարում էին բարե-
պաշտներ, և այդ արդարացի է:

նեցին: Թոյլ և փոփոխամիտ Վիգիլիոսը՝ որ բազմեւ էր Պետրոսի գահի վրայ, ամենաողորմակի կերպով կայսեր մասնեց, որը իրապէս կառավարում էր եկեղեցին, Հռովմի եկեղեցու գիրքն ու աստիճանը: Տիեզերական հինգերորդ ժողովը փակուեց միանգամայն հլու հպատակուելով կայսեր հրամաններին: Զնայած զբան, այդ արդիւնքն էլ, որ ամբողջ պետութիւնը ամենազօրեղ դռգուման մէջ էր դրել, երևաց իբրեւ կատարեալ անյաջողութիւն: Մոնոփիւզիաները մնացին իրենց բաժան զբութեան մէջ: Ընդհակառակը իտալիան և Աֆրիկան գտնում էին՝ թէ այդ որոշումներով փնասւում է քաղկեդոնականութիւնը, որ բարձր էր գնահատւում ամբողջ արեմուտքում: Վերին իտալիայի և իտալեան եպիսկոպոսները պառակտումը հասցրին հերձուածի, որ մի քանի սերունդ տեւեց: Եւ Աֆրիկայի Փեկունդոս Հերմիանցի եպիսկոպոսը համարձակ խօսքերով կայսեր երեսին էր զարկում, սուրբ զրբից օրինակներ բերելով (Ռոման, Դաթան, Արիոն և ին.), որ նա իւր իշխանութեան իրաւունքների սահմանից անցնում է: Միայն Բրիտանոն է որ միաժամանակ թագաւոր է և քահանայ. նա չի տուել թագաւորներին այն, ինչ որ քահանային է յատուկ: Սոքա այնպիսի ձայներ են, որ արդէն հնչել էր Դոնատոս Մեծը. և այդ հին ժամանակներից ի վեր կազմում է արեւմտեան եկեղեցու արդարացի առանձնայատկութիւնը: Օրինականութեան մէջ քարացած արեւելքը այդ բաները կը լսէր մեծ զարմացմամբ, գուցէ նաեւ արդար բարկութեամբ, սակայն յետագայ դարերում նոյն բաները արձագանք գտան նաեւ Բիւզանդիոնում:

Այդ բոլոր անյաջողութիւնները Յուստինիանին չշփոթեցին և նա շարունակեց մերձեցում գլուխ բերել: Դեռ իւր թագաւորութեան վերջի տարին, առանց յոգնեալ, դաւանաբանութիւններ արտադրող քահանայ-կայսրը, մի հրովարտակ արձակեց, որ բարեպաշտ ականջների համար շատ վիրաւորական էր, որով տէրութեան դաւանանք էր հրատարակուելու «Աթթարտողկետիսմոսը» — Տիրոջ մարմնի անապականութեան ուսումը, որ նոյն իսկ մոնոփիւզիաներից շատերից մեր-

ժուած էր: Միայն կայսեր փաղահաս մահը 565 թ. ազատեց օրթոդոքս եկեղեցականներին հաւատոյ ամենամեծ հալածանքներից՝ պաշտօնազրկութիւնից և աքսորից:

Մինչդեռ մոնոփիւզիաների վրայ նայում էին ընդհանուր եկեղեցուց թէկուզ բաժանուած, անդամների վրայ, և նոցա հետ վարւում էին ակներեւ մեղմութեամբ. ինչպէս սովոր է միշտ վարուելու բիւրոկրատիան, երբ նա գործ ունի լաւ կազմակերպուած և հաւատարիմ հետեւողներ ունեցող եկեղեցական համայնքների հետ, առանց այլեւայլութեան էին վարւում միւս հետեւալ համայնքների հետ, որոնք թւով փոքր էին:

(Շարունակելի).

Մեսրոպ Վարդապետ.



ԽՈՐԵՆԱՅՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՆՈՐ ՓՈՐՁ

Ա.

Խորենացու զբութեան ժամանակի մասին հետազօտութիւնները և բանակոխը՝ թեր և դէմ կարծիքներով շարունակուում են: Սոկրատ Սքոլաստիկոսի և Սեղբեստորոսի Վարքի հրատարակութիւնը հ. Մեսրոպի աշխատութեամբ բանակուին և խուզարկութեանց նոր նիւթ և նոր դարկ տուեց: Փոքր-Սոկրատի վրայ զբուած յոյսերը չարգարացան: Բոլորովին համակարծիք եմ հ. Մեսրոպին, որ Փոքր-Սոկրատն է Խորենացուց օգտուողը, ուստի և Խորենացին կանուխ է Փոքր-Սոկրատի խմբագրութիւնից: * Ուրեմն և Փոքր-Սոկրատով, որի մէջ հիւսուած է և Սեղբեստորոսի Վարքի համառօտութիւնը, անհնարն է որոշել Խորենացու զբութեան ակրմակիքը, այսինքն այն թուականը, որից առաջ չէր կարող զբուած լինել Հայոց Պատմութիւնը: Մեծ-Սոկրատի և Խորենացու կապը չհաստատուեց, դոնէ այդ բանն ապացուցանելու համար հարկաւոր են նոր և զբաղան փաստեր: Նոյնը կարելի է ասել, կամ լաւ ևս կարելի էր ասել Սեղբեստորոսի ընդարձակ Վարքի հայ թարգմանութեան համար: Այս մասին հ. Մեսրոպը իւր հետազօտութեամբ հասու հետեւեալ եղբակացութեանը. «Խորենացին չէ ճանաչել Սոկրատի եկե-

* Հակառակն է աշխատում ապացուցանել պ. Դր. Խաչքեանը, որի յօդուածի. դեռ միայն առաջին մասը այժմ հասու մեր մոտը. Տես Հանդ. Անսոր. 1897, հոկտեմբեր: